ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՓՈՒԶՅԱՆ — *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841—1946), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 369 էջ։*

Աշխատության մեջ շարադրված է Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների ավելի քան մեկդարյա՝ 1841—1946 թթ., պատմությունը։ Գրքի առաջին բաժնում լուսաբանված են 1841—1918 թթ. Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների սոցիալ-տնտեսական կացությունը, հայերի տեղաբաշխման, արհեստագործության, առևտրի, գյուղատնտեսության, մշակութային կյանքի զարգացման, ազգային և սոցիալական ճնշման, հայկական կոտորածներին վերաբերող հարցերը։ Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել աշխատավոր գյուղացիության ազատագրական ընդվզումներին, որոնց պակր Մուսա լեռան հերոսամարտն է։ Քննարկված են հայ-արաբական հարաբերությունները, օսմանյան բռնակալության դեմ հայերի և արաբների համատեղ պայքարի հարցերը։ Գրքի երկրորդ բաժնում ընդգրկված են 1918—1943 թթ.՝ բախտորոշ իրադարձություններով հագեցած ժամանակահատվածի, առավել կարևոր խնդիրներ. հայ գաղթականների ներհոսը, որբահավաքը, հայերի թվաքանակը, հայ դեմոկրատական կազմակերպությունների սաղմնավորումն ու զարգացումը, հայ և արաբ աշխատավորների, նշանավոր գործիչների հակաիմպերիալիստական համատեղ պայքարը, նրանց կապերը Սովետական Հայաստանի հետ, հայրենադարձությունը։ Գիրքն ունի վերջաբան, ծանոթագրություններ, աղբյուրների ու դրականության, անձնանունների ու տեղանունների ցանկեր։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը։

«ՏԱՐԵԳԻՐՔ (1986), ՀԱՅ ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ», *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 179 էջ։*

Տարեգրքում զետեղված են հինգ տեսական հոդվածներ, որտեղ խոսվում է էսթետիկական մտքի պատմության առարկայի և աղբյուրների, Հին Հունաստանի մտածողների և Մովսես Խորենացու տիեզերական ժառանգության մեջ դրսևորված գեղեցիկի և լույսի, չափի ու ներդաշնակության կատեգորիաների, հայ մտածող Հովհ. Սարկավագի գեղագիտական հայացքների, Խ. Էրզրումեցու և Պ. Ադամյանի էսթետիկական հայացքների մասին։

Տարեգրքի մեջ կան Հրապարակումներ, Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն, Տարեգրքի հյուրերը, Գրախոսություն բաժինները։ Հոբելյանական տարեթվեր բաժինը նվիրված է Արշակ Ադամյանին և Ռաֆայել Սամսոնովին։ Տարեգիրքն ունի Տեղեկատու, Լրատու և տվյալներ հեղինակների մասին։

Գրքի գլխավոր խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը։

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ — *Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 215 էջ։*

Աշխատության չորս գլուխներում լուսաբանված են Հովհ. Թումանյանի հետաքրքրությունը, սերը, պրպտումները, վերաբերմունքը ժողովրդական հեքիաթների վերաբերյալ։ Շրջանառության մեջ դրված 400 արխիվային նորահայտ նյութերի միջոցով բացահայտված է մեծ գրողի ստեղծագործական աշխատանքը ժողովրդական՝ հեքիաթների գեղարվեստական մշակման ասպարեզում։ Հեղինակը քննարկում է նաև ժողովրդական հեքիաթների լեզվական մշակույթի հարցերը։ Գիրքն ունի վերջաբան, սկզբնաղբյուրներ և տեսական գրականություն, Հովհ. Թումանյանի հեքիաթների և անձնանունների ցանկ, համառոտագրություններ։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Պ. Հ. Հակոբյանը։

ՌՈՊԵՐ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ — *Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 355 էջ։*

Աշխատության մեջ տեղ են գտել սփյուռքահայ հասարակական ճանաչված գործիչ, պատմաբան և բանասեր Ռոպեր Կյուլպենկյանի՝ 1970—1980 թթ. լույս ընծայած ութ աշխատությունները հայ-պորտուգալական հարաբերությունների վերաբերյալ։ Դրանք, տպագրված լինելով պորտու-

դալերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, մատչելի չէին սովետահայ մասնագետներին. հեղինակը թարգմանել է դրանք և տրամադրել Մաշտոցի անվան Մատենադարանին՝ հրատարակության համար։ Եվրոպական աղբյուրների, մատենագրական երկերի և դիվանական վավերագրերի հիման վրա լուսաբանված են հայ-պորտուգալական տնտեսական և մշակութային առնչությունները, Արևելք-Արևմուտք քաղաքական հարաբերությունները, Մերձավոր արևելքում և Հնդկաստանում հայ վաճառականների ծավալած առևտրական գործունեությունը։

Գրքի պատասխանատու խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանը։

ԿՈՋՄՈ ԿՈՋՄՈՅԱՆ — *Հրազդան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 140 էջ։*

Աշխատության յոթ գլուխներում ներկայացված է Սովետական Հայաստանի քաղաքներից մեկի՝ Հրազդանի, տարեգրությունը՝ սոցիալիստական շինարարության (1920—1940), Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945), նրա գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը. սովխոզների վերելքը, կառուցապատումը, մշակույթը, լուսավորությունը, առողջապահությունը՝ հետպատերազմյան տարիներին (1945—1980), բնակչության աճը, զբաղվածությունը, նյութական բարեկեցիկ վիճակը, աշխատանքային առօրյան։

Գրքի պատասխանատու խմբագիրներն են Գ. Մ. Գեղամյանը և Մ. Կ. Հարությունյանը։

ՎԼԱԴԻՄԻՐ ՕՍԻՊՈՎ — *Դպրոցը երեկ, այսօր, վաղը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 169 էջ։*

Աշխատության չորս գլուխներում, դպրոցական ռեֆորմի լույսի ներքո, վերլուծվել են սովետական կրթության համակարգի զարգացման հեռանկարները, որոնք ժամանակագրական առումով համընկնում են մեր երկրի՝ սոցիալիզմի բազմակողմանի և պլանաչափ կատարելագործման փուլ մտնելուն, որի հետևանքով հասարակությունը կհասնի որակական նոր մակարդակի։ Ցույց է տրվել, որ ռեֆորմի առանցքային ուղղությունը միջնակարգ կրթության պրոֆեսիոնալացումն է, որը տրամաբանորեն հանգեցնում է կրթության ողջ համակարգի կազմակերպական-բովանդակային վերակառուցմանը՝ առաջադրելով սոցիալ-մանկավարժական մի շարք խնդիրներ։ Ուսումնասիրվել են արտադրության ու հանրակրթական դպրոցի, դպրոցի և պրոֆտեխուսումնարանների փոխհարաբերությունները, ուսուցման և արտադրողական աշխատանքի կապը, աշխատանքային դաստիարակությունը, մասնագիտական կողմնորոշումը և այլն։ Գիրքն ունի նաև ծանոթագրությունների բաժին։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Ա. Մ. Էկմալյանը։